ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՓՈՐՁԱԳԵՏ ՆՈՆԱ ԱՀԱՐՈՆՅԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի փետրվարի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեխաների հիմնահարցերի բաժնի փորձագետ Նոնա Ահարոնյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ.

1. Հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել եմ, խնամատարություն ստանձնած ծնողների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը՝ մասնավորապես ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան գրություն է ուղարկվել՝ մասնագիտական աջակցման և խորհրդատվության անհրաժեշտություն ունեցող, արդեն իսկ խնամատարություն ստանձնած ծնողների վերաբերյալ: Հավաքագրված տեղեկատվությունը տրամադրվել է ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամին, որը ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ 2020 թվականի օգոստոսի 20-ին կնքված երկկողմ հուշագրի համաձայն իր ստանձնած պարտավորությունների շրջանակում իրականացրել է խնամատար ծնողներին խորհրդատվության տրամադրում՝ խնամատարության առանձնահատկությունների, ռիսկերի և հնարավորությունների առնչությամբ՝ վերջիններիս համար կազմակերպելով անհատական խորհրդատվական հանդիպումներ և երկօրյա դասընթաց գործող խնամատար ծնողների համար՝ «Երեխաների զարգացման կարիքները» թեմայով:

2. Հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել եմ ՀՀ ԱՍՀՆ Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի կողմից իրականացվող երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում մասնագիտական կողմնորոշման համակարգի ներդրման աշխատանքներին, որի շրջանակներում իրականացրել եմ երկօրյա այց Շիրակի մարզ:

3. Հաշվետու ժամանակաշրջանում մասնակցել եմ, «ՍՕՍ մանկական գյուղեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Ընտանիքների ամրապնդում» ծրագրի շրջանակներում անհատական դեպքերի քննարկումներին: Ծրագրի նպատակն է երեխայի հաստատությունում հայտնվելու ռիսկի կանխարգելումը, իսկ հաստատությունում խնամք և դաստիարակություն ստացող երեխայի պարագայում՝ վերամիավորումը: Համատեղ աշխատանքները շարունակվում են:

4. Իրականացրել եմ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող ՊՈԱԿ-ների կողմից ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրություն, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:

5. Մասնակցել եմ նախարարության և այլ կառույցների միջև կնքվող հուշագրերի, համաձայնագրերի մշակման աշխատանքներին:

6. Մասնակցել եմ տարբեր շահագրգիռ կազմակերպությունների կողմից կազմակերպված համդիպումներին և միջոցառումներին՝ ներկայացնելով բաժնի դիրքորոշումները քննարկվող հարցերի վերաբերյալ:

7. Մասնակցել եմ բաժնի ընթացիկ աշխատանքներին, քննարկումներին և հանդիպումներին: Միաժամանակ ելնելով բաժնի աշխատանքներից կազմակերպել եմ տարբեր կազմակեպությունների, ՀԿ-ների և հիմնադրամների հետ հանդիպումներ:

8. Բաժնի պետ հանձնարարությամբ կազմել եմ գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր:

9. Բաժնի պետի հանձնարարությամբ իրականացրել եմ բաժնի գործառույթներից բխող այլ աշխատանքներ:

Երեխաների հիմնահարցերի բաժնի փոձագետ՝ [illegible] Նոնա Աharonյան
26.12.2022թ.

Կատարված աշխատանքները
գնահատում եմ դրական
Երեխաների հիմն. հարց. [illegible]
բաժնի պետ՝ [illegible]